ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- սեպտեմբերի 2009 թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 6/2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի կանոններով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող ք.Երևան, Հյուսիսային պողոտա թիվ 6/2 հասցեում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին (սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2579754 վկայական, տրված 11.12.2008թ.) տրամադրել վարձակալության «Հանքաշար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գտնվելու վայրը՝ք.Երևան, Ա.Արնենակյան 127):
2. Վարձակալության պայմանագրում ներառել պարտադիր պայմաններ՝ համաձայն հավելվածի:
3. Վարձակալության պայմանագրի ժամկետը սահմանել 4 /չորս/ տարի:
4. Վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը է կրում է վարձակալը:
5. Սահմանել, որ «Հանքաշար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից վարձակալության պայմանագիրը կնքելուց հրաժարվելու դեպքում Երևան համայնքի սեփականությունն հանդիսացող ք.Երևան, Հյուսիսային պողոտա թիվ 6/2 հասցեում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին ենթակա է տրամադրման վարձակալության մրցութային եղանակով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝ Երևանի քաղաքապետ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2009թ.ՍԵՊՏԵՄԲԵՐԻ -----N---Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 6/2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Վարձակալը պարտավոր է՝

1.1.ստորգետնյա ավտոկայանատեղիում (առաջին ստորգետնյա նիշ h=3.3) - տեղադրել մուտքի և ելքի առանձին ուղեփակոցներ.

1.2.ստորգետնյա ավտոկայանատեղիում (երկրորդ ստորգետնյա նիշ h=3.4)- Հյուսիսային պողոտայի կառուցապատողների կողմից շենքերի շինարարության ավարտից հետո՝ տեղադրել մուտքի և ելքի առանձին ուղեփակոցներ.

1.3. կառուցել ավտոլվացման կայան.

1.4. կատարել ավտոկայանատեղիի ընթացիկ վերանորոգումը.

1.5.ավտոկայանատեղին պահպանել սարքին տեխնիկական վիճակում.

1.6.առանց վարձատուի նախնական գրավոր համաձայնության չկատարել ավտոկայանատեղի վերանախագծում, վերասարքավորում և անբաժանելի բարելավում.

1.7.ապահովել ճարտարագիտական, կոմունիկացիոն ցանցերի և սարքավորումների պատշաճ պահպանումը.

1.8.ինքնուրույն կրել բոլոր կոմունալ ծախսերը, այդ թվում՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման և ջրամատակարարման հետ կապված ծախսերը.

1.9.ապահովել ավտոկայանատեղին անհրաժեշտ անձնակազմով (պահակներ, հավաքարարներ և այլն):

Ավտոկայանատեղիում վարձակալի կողմից վարձավճարը ենթակա է գանձման հետևյալ դրույքաչափերով

մինչև 14 ժամ	100 դրամ
14 և ավելի ժամ	50 դրամ
երկարատև (30 օր և ավելի)	ամսեկան 30000 ՀՀ դրամ

Ավտոկայանատեղիի վարձակալության վճարը սահմանվում է ամսեկան 720.000 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է հետևյալ բանաձևով

Միջին զբաղվածություն 50% (200 ավտոկայանատեղ *50%) * մեկ մեքենայի վարձավճար միջին 100 ՀՀ դրամ*24 ժամ* 30 օր* 10%=720,000.0 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Վարձակալի կողմից կատարված բոլոր ներդրումները վարձակալության պայմանագրի ավարտից հետո որպես սեփականություն, փոխանցվում են Երևան համայնքին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 6/2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հյուսիսային պողոտա թիվ 6/2 ստորգետնյա ավտոկայանատեղին (այսուհետ՝ Օբյեկտ) կառուցված է Երևանի քաղաքապետարանի և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի միջոցներով 2007 թվականին:

Ինչպես հայտնի է Երևան քաղաքի Կենտրոնը խիստ ծանրաբեռնված է մեքենաներով, որը առաջացնում է նաև կայանելու խնդիր: Ստորգետնյա ավտոկայանատեղերի միջոցով հնարավոր է որոշ չափով մեղմել ստեղծված իրավիճակը:

Ավտոկայանատեղին կառուցվելուց հետո չի շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

Որոշման նախագծի ընդունման դեպքում կկարգավորվի Ազատության հրապարակին հարակից տարածքում ավտոկայանատեղեր ունենալու խնդիրը, կբարեկարգվի ավտոկայանատեղին, կհամալրվի Երևան համայնքի բյուջեն:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 6/2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված որոշման նախագիծը չի առաջացնում ավագանու այլ որոշումներ ընդունելու անհրաժեշտություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ